

# ՀՀ-ում Օրգանական շուկայի ներկա իրավիճակը, խնդիրները ու հնարավորությունները

Նունե Դարբինյան, գ.գ.թ., հասարակական խորհրդի անդամ,  
«Էկո Գլոբ» ՀԿ նախագահ

ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի 02  
նոյեմբերի 2016 թ-ի նիստի զեկուցում:

## Ակնարկ

Գյուղատնտեսության ոլորտը Հայաստանում ընդգրկում է 340,000 ֆերմերային տնտեսություններ և մեծ թվով մասնավոր ընկերություններ, որոնք զբաղված են գյուղատնտեսական ծառայություններով, ինչպես նաև մարկետինգով և գյուղատնտեսական արտադրանքի մշակմամբ: Մասնավոր ագարակատերերին է պատկանում վարելահողի 71,7 տոկոսը, բազմամյա մշակաբույսերով տարածքների 78.3 տոկոսը, և խոտածածակ հողերի 48.4 տոկոսը: Մասնավոր հատվածն արտադրում է գյուղատնտեսության համախառն արտադրանքի 98 տոկոսը: Հողերը բաժանվել են ավելի քան 1,2 միլիոն հողակտորների: Ներկայումս միջինում մեկ տնտեսությունն ունի 1,4 հեկտար հողատարածք, ներառյալ 1,1 հեկտար վարելահող: Գյուղատնտեսական արտադրության արդյունավետ կազմակերպմանը լրջորեն խոչընդոտում են հողային բարեփոխման արդյունքում ստեղծված ագարակների փոքր չափերը և դրանից բխող տարաբնույթ առաջացող խնդիրները: Մինևույն ժամանակ, համաձայն պետական վիճակագրության տեղեկատվության, հողերի 32 տոկոսը չեն օգտագործվում իրենց նպատակային նշանակությամբ: Դա ունի մի շարք պատճառներ, ինչպիսիք են այդ հողերի մի մասի՝ հայ-ադրբեջանական սահմանի շրջակայքում վտանգավոր կամ ականապատված տարածքներին մոտ գտնվելը, վարելահողերի մի մասի՝ բնակավայրերից հեռու գտնվելը, դրանց փոքր չափերը կամ պարզապես հողերի ցածր որակը՝ տնտեսավարելու համար:

Օրգանական գյուղատնտեսության զարգացման կարելիոր նախադրյալներից են այն փաստերը, որ հողի սեփականաշնորհումից հետո պարարտանյութերի և պայքարի միջոցների օգտագործումը նվազել է տնտեսական խնդիրների և այդ միջոցների պակասի արդյունքում: Այդպիսով, գյուղատնտեսության մեջ շրջակա միջավայրի պայմանները բարելավվել են անցյալ սոցիալիստական ինտենսիվ գյուղատնտեսության պայմանների հետ համեմատած: Այդուհանդերձ, ագրոքիմիական միջոցների ներմուծումը շարունակում է վտանգել շրջակա միջավայրը: Հայաստանի կարևորագույն բնապահպանական խնդիրներ են համարվում զանգվածային անտառահատումները, Սևանա լճի՝ Հարավային Կովկասում քաղցրահամ ջրի ամենամեծ պաշարի, մակարդակի անկումը, հողի դեգրադացիան և բնահողի էրոզիան, թափոնների կառավարումը, ներառյալ անցյալից ժառանգված՝ արդյունաբերական թափոնների և հնացած վտանգավոր թափոնների կուտակումների կառավարման բացակայությունը, ինչպես նաև կենսաբազմազանության կորուստը և բնական պաշարների անվերահսկելի օգտագործումն ու/կամ սպառումը:

Օրգանական գյուղատնտեսությունն առաջին անգամ Հայաստանում ներկայացվել է 2002 թ.-ին: Օրգանական գյուղատնտեսության արտադրության ընդհանուր հողատարածքը 2012թ.-ին կազմում էր 19000 հեկտար, որը ներռում է հավաստագրված գյուղատնտեսական ու վայրի հավաքի տարածքներ ու անցումային դեպի օրգանական հողեր: Օրգանական մեղվաբնտանիքների քանակը կազմում է մոտ 800 մեղվաբնտանիք 2015 թվականին:

Ներքին շուկան թույլ է զարգացած: Տեղական մանրածախ սննդի խանութները առաջարկում են տեղական արտադրողների սահմանափակ ծավալների օրգանական արտադրանք, իսկ սպառողների շրջանակներում պահանջարկը աճում է: Մանրածախ օրգանական շուկայավարման փորձը սահմանափակ է, կամ շատ հաճախ բացակայում է: Այդ փորձը պետք է ստեղծել ել ուսուցանել: Շուկան լի է կեղծ սպառողի շրջանում մոլորություն առաջացնող

հայտարարություններով: Անհավասար մրցակցություն է “ճիշտ” սերտրֆիկացված օրգանական արտադրողների հետ:

Հայկական օրգանական արտադրանքի առաջին արտահանումները սկսվել են 2008 թ.: Արտահանման ծավալները ժամանակի ընթացքում աճում են, սակայն քանակները ու մատակարարման պարբերականությունը դեռևս անբավարար են ու չեն համապատասխանում միջազգային շուկայի պահանջարկին, հատկապես ԵՄ և ԱՄՆ, այլ շուկաներ:

Արտահանվող հիմնական օրգանական արտադրանքը գյուղատնտեսության և վայրի հավաքման պտուղների և հատապտուղների արտադրանք է, ինչպիսիք են արագ խորը սառեցված մթերքը, հյութերը, ըմպելիքները, մրգերը օշարակի մեջ (կոմպոտները), մուրաբաներ ու մեղրը: Ներկայումս դեղաբույսերի / խոտաբույսերի ոլորտը նույնպես պատրաստ է մատակարարել բարձրորակ մթերք միջազգային շուկային: Ջարգացման միտում ունեն օրգանական գինու, չոր մրգի, ակվակուլտուրայի ոլորտները: Օրգանական արտահանվող արտադրանքի համար առավել շահեկան գներ են նշանակվել համետած ավանդական արտադրանքի: Վերամշակողները հանդիսանում են օրգանական շուկայի հիմնական մասնակիցները ու զարգացնողները: Նրանք են հիմնականում զբաղված արտահանմամբ/ներմուծմամբ և ներկայացնում են ամենազլխավոր սեգմենտը՝ ձեվավորելով պահանջարկ հավաստագրված օրգանական հումքի հանդեպ:

Ազգային օրգանական օրենսդրությունը առկա է, իսկ օրգանական գյուղատնտեսությունը նշված է ազգային ագրոարդյունաբերական քաղաքականության մեջ: Այնուամենայնիվ, բացակայում է աջակցությունը ֆերմերներին՝ օրգանական արտադրության անցում նախաձեռնելու համար: Որպես եզակի օրինակ, կառավարության ուղիղ աջակցությունը սահմանափակվել է օրգանական հատապտուղների տնկման մեկ բիզնես ծրագրով: Ներկայումս կառավարության ու շահագրգիռ կողմերի միջնորդությամբ իրականացվում է ԵՄ ու Ավստրիայի կառավարության ֆինասավորմամբ իրականացվող ծրագիրը:

Անվիճարկելի է օրգանական գյուղատնտեսության ոլորտի զարգացման համար մի շարք նախկինում իրականացված միջազգային ծրագրերի իրականացումը տեղական ՀԿ ներքին միջոցով, այդ թվում Շվեյցարիայի, Նիդերլանդների, Գերմանիայի, ԱՄՆ, ՄԱԿ-ի Կանաչ էկոնոմիկայի ծրագրի շրջանակներում: Իրականացվել են “Էկո-Գլոբ” ՀԿ, Շեն ԲՀԿ, ԳԳԶԿ/CARD, Կանաչ արահետ ՀԿ, մի շարք այլ կազմակերպությունների կողմից 2002 թվականից ի վեր: ՀՀ-ում հիմնադրվել է Հայկական Օրգանական Գյուղատնտեսության հիմնադրամը (AOAF)՝ ստեղծելու հարթակ բոլոր շահագրգիռ կողմերի համար, սակայն այն ներկայումս չի գործում:

Հայաստանում առկա է տեղական օրգանական հավաստագրման/սերտրֆիկացման մարմինը “Էկոգլոբ” ՍՊԸ, որին հաջողվել է ստանալ միջազգային ճանաչումներ ու ապահովել ազգային օրգանական օրենսդրության իրականացումը: Հայկական արտադրողները օգտվում են Էկոգլոբ ՍՊԸ ընկերության կողմից տրամադրվող օրգանական հավաստագրման հնարավորություններից: Օրգանական հավաստագրումը առավել հարմարեցված է տեղական տնտեսա-մշակույթային պայմաններին, նպաստում է առավել մեղմ անցմանը օրգանական արտադրությանը, ինչպես նաև ապահովում է տարբեր շուկաների պահանջներին համապատասխանող ծառայություններ նպաստելով տեղական օրգանական արտադրողների արտահանման ներուժի

աճին ու մրցունակությանը: Հայ ֆերմերները, վերամշակողները ու արտահանողները ու ներմուշողները կարող են մեկ փաթեթի շրջանակներում ստանալ ՀՀ, ԵՄ, Շվեյցարիայի, ԱՄՆ, Կանադայի ու մի շարք այլ պետությունների համար սերտիֆիկատներ ու ներկայանալ այդ շուկաների օրգանական հատվածում:

**Ազգային օրգանական նշանը**



**Հայ արտադրողները կարող են կիրառել նաև միջազգային մականշումներ սերտիֆիկացման միջոցով.**

ԵՄ լոգոն հայկական ծագման օրգանական արտադրանքի համար	USDA NOP Օրգանական լոգոն	Կանադայի օրգանական լոգոն	DAkkS հավաստարմագրման լոգոն, թույլատրված օգտագործելու ԷԿՈԳԼՈԲ-ի համար	«Կանաչ Կովկաս» տարածաշրջանային լոգոն
 Non-EU Agriculture AM-BIO-112			 Deutsche Akkreditierungsstelle D-ZE-18154-01-00	

Օրգանական գյուղատնտեսության խորհրդատվության հնարավորությունները սահմանափակ են և հիմնականում տրամադրվում են դոնորների կողմից ֆինանսավորվող հասարակական կազմակերպությունների կողմից: Ազգային գյուղատնտեսական աջակցության կենտրոնների ԳԱՄԿ-երի, մասնագետները ուսուցանվել են տարբեր միջազգային աջակցության ծրագրերի շրջանակներում օրգանական արտադրության ընդհանուր պահանջների հարցերի շուրջ, սակայն նրանց ազգային մակարդակով ոլորտի զարգացման վրա ներազդելու հնարավորությունները խիստ սահմանափակ են:

Առակա տարբեր զեկույցները կանխատեսում են, որ օրգանական գյուղատնտեսության չափերը կարող են հասնել 50,000 հեկտար վարելահողի, ինչը կկազմի Հայաստանի գյուղատնտեսական հողերի 2.5 տոկոսը, ինչպես նաև 6,000-ից 10,000 հեկտար արոտավայր կարող է բերվել օրգանական կառավարման տակ:

Լավատեսական կանխատեսումները գնահատում են, որ 10 տարուց ներքին շուկան կապառի օրգանական ընդհանուր արտադրանքի 10-ից 20

տոկոսը, մինչ 80-ից 90 տոկոսը կարող է արտահանվել: Դրա ընդհանուր արժեքը կհամապատասխանի մոտավորապես 100 միլիոն ԱՄՆ դոլարի:

Օրգանական կառավարումը իրենից ներկայացնում է լավագույն պրակտիկա՝ բնահողերի և արոտավայրերի բարելավման համար: Հայտնի է, որ հողերը բարելավվում են օրգանական կառավարմամբ, և դրանց միջին արժեքը կարող է բարձրանալ առնվազն 50 տոկոսով: Եթե մեկ հեկտար գյուղատնտեսական հողի միջին արժեքը ընդունել 10 000 ԱՄՆ դոլար (լրացուցիչ պետք է ճշտել)՝ կախված գտնվելու վայրից, հողի տեսակից և կատեգորիայից, ապա 50,000 հեկտար եթե փոխարկվի օրգանականի, ապա դա կնշանակի հողի արժեքի առնվազն 250 մլն ԱՄՆ դոլարի աճ:

Օրգանական գյուղատնտեսությունն իր շուկայական կողմնորոշման ուղղվածությամբ և շուկաների պահանջարկով կարող է լավ հիմքեր ստեղծել լքված և չօգտագործվող հողերը գյուղատնտեսական կիրառության մեջ ներգրավելու համար: Այն կարող է դառնալ մի կարևոր գործունեություն, որի շնորհիվ կնվազի գյուղաբնակների արտահոսքը դեպի մայրաքաղաք կամ արտերկիր որպես աշխատուժ:

Հողային ռեսուրսների ներկայիս խոշորացումը կարող է միավորել օրգանական ֆերմերներին: Օրգանական գյուղատնտեսությունը, որը հիմնված է հետազոտելիության պարտադիր պահանջների վրա, անուղղակիորեն խթանում է ինտեգրումը արժեքային շղթայի ֆերմերների ու վերամշակողների միջև: Կարելի է, հետևաբար, ակնկալել ավելի լավ գործող շուկայական կապեր:

Հայտնի է, որ օրգանական արտադրության պահանջները հիմնվում են մեծամասնորեն հողի, բույսերի, կենդանիների տեսակների այնպիսի կառավարման վրա, որը խրախուսում է բնական ռեսուրսների խնայողությունը, պահպանությունը ու բարելավումը: Ջերմոցային գազերի արտանետումների մեղմացումը օրգանական գյուղատնտեսության միջոցով կարող է նոր հնարավորություն դառնալ ինչպես ֆերմերների և ներդրողների, այնպես էլ, ընդհանուր առմամբ, երկրի համար: Օրգանական գյուղատնտեսության վարումը կարող է կլանել ածխածինը և այդպիսով նվազեցնել ջերմոցային գազերի արտանետումները: Օրգանական գյուղատնտեսության մեջ ածխածնի կլանումից ստացվող եկամուտը 50,000 հեկտարից կարող է հասնել տարեկան 1-2 միլիոն ԱՄՆ դոլլարի:

Օրգանական գյուղատնտեսությունը կարող է նպաստել զբաղվածության աճին՝ բազմաթիվ մեխանիզմների միջոցով: Չօգտագործվող և լքված գյուղատնտեսական տարածքների մշակումը օրգանական մեթոդի կիրառմամբ կառաջացնի զբաղվածության աճ գյուղական տարածքներում: Նոր գրավիչ աշխատատեղերն, ինչպիսիք են օրգանական խորհրդատվությունը, օրգանական կառավարիչները, օրգանական տեսուչները և այլն հասանելի կլինի շահագրգիռ անձանց և տեղական կազմակերպությունների համար: Գյուղի երիտասարդ ազգաբնակչությունը ավելի սերտ կկապվի գյուղական վայրերին, երիտասարդության զարգացման համար կառաջանան հրապուրիչ զարգացման հնարավորություններ: Որպես լրացուցիչ օգուտ, զարգանալու հնարավորություն ունեն նոր բիզնեսները, ինչպիսիք են ագրո- և էկո- տուրիզմը, մատակարարումը հյուրանոցային և զբոսաշրջության ոլորտներում, արտահանումը և տեղական առևտուրը, և այլն: Վերջինն էլ կնպաստի գյուղական արտագաղթի դանդաղեցմանը:




Օրգանական գյուղատնտեսությունը Հայաստանում կարող է համատեղել արտահանումից ստացված տնտեսական աճը շրջակա միջավայրի համար նպաստավոր գյուղատնտեսության հետ:

Այն կարող է մեծացնել գյուղական համայնքների եկամուտները, գերազանց բիզնես հանդիսանալ ներդրողների համար և խոշոր ներդրումներ կատարել ազգային տնտեսությունում՝ նվազեցնելով ներկրումները և խթանելով արտահանումը օրգանական արտադրանքի վաճառքի միջոցով: Համաձայն Միացյալ Ազգերի Շրջակա Միջավայրի Ծրագրի (ՄԱԿ-ի ՇՄԾ՝ UNEP) «Կանաչ տնտեսության նախաձեռնության» շրջանակներում անցկացված գնահատականների, օրգանական արտադրանքի վաճառքը 2020 թվականին կարող է հասնել 100 մլն ԱՄՆ դոլարի, եթե ոլորտն ընդլայնվի որպես գերակա ոլորտ:

Մեծագույն արժեքը բնական կապիտալի աճն է: Այն պահպանում է հողի օրգանական նյութն ու կենսաբազմազանությունը և այդպիսով ստեղծում էկոհամակարգային ծառայությունների և հանրային բարիքների բազմություն, որոնցից ոմանք կարող են բիզնես հնարավորություններ լինել, օրինակ.

- Եթե հողերը բարելավվել են օրգանական կառավարման հետևանքով, ապա նրանց արժեքը կբարձրանա միջինը 50 %-ով:
- Եթե ագարակատերերը ստանան արդար փոխհատուցում կենսաբազմազանության պահպանման և այլ ծառայությունների համար, ապա 50,000 հա-ից կարող է ստացվել, թերևս, 10 միլիոն եվրոյի լրացուցիչ տարեկան եկամուտ:
- Ջերմոցային գազերի ազդեցության մեղմացումը օրգանական գյուղատնտեսության միջոցով կարող է հնարավորություն հանդիսանալ և՛ ագարակատերերի, և՛ ներդրողների, ինչպես նաև ընդհանրապես երկրի համար: Ածխածնի կլանումից ստացված օգուտը օրգանական գյուղատնտեսության մեջ 50,000 հա-ից տարեկան կարող է հասնել 1 -2 միլիոն ԱՄՆ դոլարի:

Չնայած օրգանական գյուղատնտեսությունը դեռևս իրենից ներկայացնում է ամբողջ աշխարհի 1 տոկոսից էլ պակաս հողերով մի հատված, բայց գրանցված են օրգանական գյուղատնտեսության բազմաթիվ հաջողություններ ըստ առանձին վերցրած երկրների և ըստ տարածաշրջանների: Օրինակները բազմաթիվ են, բայց մի քանիսն արժանի են հիշատակման. 100 տոկոսանոց օրգանական քաղաքականություն Հիմալայան որոշ նահանգներում, 20 տոկոս օրգանական գյուղատնտեսական հողեր Ավստրիայում, Դոմինիկյան Հանրապետությունից արտահանվող կակաոյի մեծ մասն օրգանական է, որոշ երկրներում մանկական սննդի մինչև 80 տոկոսը օրգանական է, Թուրքիան մեծ շրջադարձ է կատարում դեպի օրգանականը և գրավում շուկայի ուշադրությունը իր տպավորիչ առաջընթացով, որոնք աջակցվում են կենտրոնական և տարածաշրջանային վարչական համակարգերի կողմից:



Աղբյուրը՝ FIBL-IFOAM ուսումնասիրությունը 2014

Աղյուսակ. Օրգանական գյուղատնտեսական հողերը, ընդհանուր գյուղատնտեսական հողերի մասնաբաժինը, արտադրողների քանակը և ներքին շուկաներում վաճառքները 2012թ.

Երկիր	Տարածք (հա)	Մասնաբաժինը բոլոր գյուղատնտեսական հողերի համեմատությամբ	Արտադրողներ	Մանրածախ վաճառքը (միլիոն եվրո)
Հայաստան	810	0.05%	24	Տվյալներ չկան

Ադրբեջան	23740	0.50%	297	3
Բելառուս	Միայն վայրի հավաքչարարություն		3	
Բուլղարիա	39137	1.28%	2754	7(2010)
Եգիպտոս	82167(2010)	2.23%	790(2009)	Տվյալներ չկան
Էստոնիա	144147	15.25%	1478	20(2011)
Ֆրանսիա	1032941	3.76%	24425	4004
Վրաստան (2011)	1999	0.08%	150	Տվյալներ չկան
Գերմանիա	1034355	6.19%	23032	7040
Իրան	42634	0.09%	6100	Տվյալներ չկան
Իսրայել	6187	1.18%	418	Տվյալներ չկան
Իտալիա	1167362	9.12%	43852	1885
Ղազախստան	291203	0.14%	Տվյալներ չկան	Տվյալներ չկան
Ղրղզստան	2696	0.03%	1172	Տվյալներ չկան
Սոլովովա (2011)	22102	0.89%	172	Տվյալներ չկան
Նիդերլանդներ	48038	2.49%	1646	791
Նորվեգիա	55260	5.10%	2590	209
Պակիստան	22397	0.09%	105	Տվյալներ չկան
Ռումինիա	288261	2.10%	15315	80 (2011)
Ռուսաստանի Դաշնություն	146251	0.07%	56	120
Շվեդիա	477685	15.58%	5601	918
Շվեյցարիա	125961	11.98%	6173	1520
Սիրիայի Արաբական Հանրապետություն (2010)	19987	0.14%	2458	Տվյալներ չկան
Թաջիքստան	12659	0.27%	10486	Տվյալներ չկան
Թուրքիա	523627	2.16%	57259	4 (2009)
Ուկրաինա	272850	0.66%	164	5 (2011)
ԱՄԷ	3905	0.69%	34	Տվյալներ չկան
Միացյալ թագավորություն	590009	3.43%	4281	1950
ԱՄՆ(2011)	2178471	0.64%	12880	22590
Ուզբեքստան	213	0.001%	1	Տվյալներ չկան

Աղբյուրը՝ FIBL-IFOAM ուսումնասիրություն 2014



Հայաստանը կարող է դիտարկի որոշ առանձնահատուկ շուկաներ, ինչպիսին են Միացյալ Արաբական Էմիրությունները (ՄԱԷ), Մաուրիան Արաբիան և Ռուսաստանը: Պահանջարկը շատ ավելի մեծ է, քան գոյություն ունեցող մատակարարումը: Այդ երկրները հիմնականում օրգանական արտադրանք չեն արտադրում այլ ներմուծում են: ՄԱԷ-ի առկա տվյալները ցույց են տվել, որ մանրածախ առևտրի մի խանութ վաճառել է 300 տոննա օրգանական բանջարեղեն չորս ամսվա ընթացքում: Հաշվի առնելով ՄԱԷ-ի հետ աճող ապրանքափոխանակությունը և առևտուրը, կարևոր է հատուկ ուշադրություն դարձնել այդ երկրի բարձր պահանջարկին և աջակցել օրգանական արտահանողներին իրենց շուկայական գործունեության մեջ: Օրգանական տոնավաճառները, ինչպես, օրինակ, «MENOPE» ցուցահանդես - տոնավաճառը, տարին մեկ անգամ տեղի են ունենում Դուբայում և պետք է այցելվեն արտադրողների և արտահանողների կողմից: Եվրասիական շուկան դեռևս չի ձևավորվել:

### **Օրգանական գյուղատնտեսության ոլորտը Հայաստանում. Օրգանական գյուղատնտեսության օրենսդրությունը**

Օրգանական գյուղատնտեսության մասին օրենքը ուժի մեջ է մտել 2009-ի մայիսից: Օրենքը մշակելիս հիմնվել են ՄԱԿ-ի ՊԳԿ Կողմից Ալիմենտարիուսի օրգանական գյուղատնտեսության ուղեցույցի ու Եվրոպական Հանձնաժողովի օրգանական կանոնների դրույթների վրա:

Այդ օրենքը շրջանակային է և սահմանում է օրգանական գյուղատնտեսության հիմնական որոշ դրույթներ ու սահմանումներ: Օրենքի կիրարկումը ունի մի շարք խնդիրներ:

Օրգանական գյուղատնտեսության զարգացման հարցերը ներառվել են ՄԱԿ-ի Ռիո +20 Գազաթաժողովի Հայաստանյան ազգային զեկույցում:

### **Օրգանական արտադրությունը Հայաստանում. Ոլորտները**

2009 թ. Հայաստանում գոյություն ունեին ութ հավաստագրված օրգանական ագարակներ և վեց հավաստագրված օրգանական մշակման և արտահանման ձեռնարկություններ:

2015 թվականի թվերը այլ վիճակագրություն են ցույց տալիս, այն է՝ 20 տնտեսություններ ու 13 վերամշակող ընկերություններ, 27 համայնքներ ներգրավված են հավաքչարարության մեջ: Օրգանական ագարակների չափերը տատանվում էր 5-ից 120 հեկտարների միջև:

Գյուղատնտեսական մի քանի արժեշրթանների, ինչպես, օրինակ, մրգերի, վայրի խոտաբույսերի և մրգերի/հատապտուղների, ինչպես նաև մեղվապահության որպես օրգանական զարգանալու համար առկա են հեռանկարներ: Չնայած այնպիսի օրգանական արժեշրթանները, ինչպես անասնապահությունը, բանջարեղենն ու հացազիները հիմնականում դեռ չեն զարգացել, բայց այդ ենթաոլորտներում նույնպես ներուժ գոյություն ունի:

Օրգանական արժեշրթանները համարվում են բնապահպանական ծառայություն մատուցողներ: ՄԳԿ-ի (FAO) զեկույցներից մեկում ասվում է. «Ֆերմերները կազմում են բնական ռեսուրսների կառավարիչների ամենամեծ խումբը Երկիր մոլորակի վրա: Նրանք և՛ կախված են և՛ ստեղծում են էկոհամակարգերի ծառայությունների լայն զանգված:

Ներկայիս աջակցման ծրագրերը պետք է դիտարկվեն ոչ միայն որպես շուկայավարման խթանող մեխանիզմ, այլ որպես ավելի գործիք, որը խթանելու է օրգանական արժեչողթաններից սպասվող արդյունքների ողջ տիրույթը՝ սկսած հողի բարելավումից մինչև կլիմայի փոփոխման գլոբալ ազդեցությունների մեղմումը:

Օրգանական անասնապահությունը սկսելու համար անհրաժեշտ են հսկայական պետական և մասնավոր ներդրումներ, օրինակ, ենթակառուցվածքային լուծումներ, անասնաբուծության և արածեցման բարելավված պայմաններ, կայուն և հասանելի արոտավայրեր:

Հայաստանում գոյություն ունեցող խոչընդոտը օրգանական արտադրության (վերամշակում եւ առեւտուր) համար օրգանական հումքի սահմանափակ ծավալն է:

Երկրի արտահանման ուղորդվածությանն աջակցելու համար, մի կողմից պետք է աջակցության ֆինանսական կամ տեխնիկական մեխանիզմներ մշակել այն ֆերմերների կամ համայնքների համար, որոնք գործ ունեն օրգանական հումքի արտադրության հետ: Մյուս կողմից, Հայաստանում վերամշակող ընկերություններն են առաջարկ ներկայացնում ու առաջ մղում օրգանական արժեչողթանները: Եվ՝ պետական աջակցությունը, և՛ բիզնես ներդրումները / աջակցությունը օրգանական արժեչողթաններին կնպաստեն արտադրության ծավալների և ազարակներից ու համայնքներից մատակարարման մեծացմանը:

Հայաստանի սննդարդյունաբերության ոլորտում սննդի անվտանգության համակարգի պարտադիր պահանջների ներքո, օրգանական ստանդարտների ներդրումը առնձնապես դժվար չէ:

Մեղվապահությունն Հայաստանում հիմնված է վայրի էկոհամակարգերի վրա, հիմնականում հեռու գտնվելով աղտոտման աղբյուրներից և վարակված տարածքներից:

Հայաստանում մեղվապահական արտադրանքների բարձր որակը ուղեկցվում է սահմանափակ ծավալների հետ, այդ պատճառով էլ մեծապես խրհուրդ է տրվում արտադրությունը կազմակերպել օրգանական մեթոդով:

### **ՀՀ-ում կարևոր օրգանական արժեչողթանները**

1. Միրգ և հատապտուղ (թարմ, չորացրած, պահածոյացված, հյութեր, նեկտարներ, ըմպելիքներ, կիսաֆաբրիկատ խյուսեր և խտանյութեր, IQF(հատիկային արագ սառեցված), ինչպես, օրինակ, խնձորը, տանձը, սերկևիլը, ծիրանը, սալորը, նուշը, բալը, հոնը, նուռը, խուրման, թուզը, ազնվամորին, մոշը, հաղարջը, և այլն:
2. Բանջարեղեն (թարմ, չորացրած, վերամշակված, պահածոյացված), ներառյալ կանաչեղեն/խոտաբույսեր տեսակներ, որոնք կիրառելի են որպես համեմունքային ու արոմատիկ (օրինակ, տեղական ռեհանը, ծիթրոնը, թարխունը, և այլն՝ թարմ և չորացրած, այլապես՝ վերամշակված), որպես ժառանգություն պահպանելու կարիք ունեցող տեղական սորտերը (սոխի, սխտորի, պոմիդորի, ցորենի, հացազգիների, և այլ տեսակները):
3. Վայրի դեղաբույսերի և համեմունքային տեսակների մշակովի ցեղակիցները, ինչպիսիք են երիցուկը, անխոնը, սամիթը, զաֆրանը, այլ մշակաբույսեր: Մի շարք ցուցադրական մշակովի աճեցումներ են կատարվել վերջին տարիներին Հայաստանում, որոնք ցույց են տվել, որ նշված տեսակները ունակ են բարեհաջող աճելու նաև Հայաստանում:

4. Օրգանական սերմարտադրություն օրգանական շուկաների համար, ինչպես, օրինակ, առվույտը և շատ այլ մշակաբույսերի սերմերը:
5. Խաղողը (թարմ, վերամշակված, չորացրած, գինի, հյութ, խտանյութ, քացախ և այլն):
6. Յուղատու բուսատեսակներ, ինչպես, օրինակ, կտավատի սերմը, ընկույզատեսակները՝ թարմ և վերամշակված տեսքով, տեղական և միջազգային շուկայի համար:
7. Յուրահատուկ հացազգիներ և էնդեմիկ տեսակներ (օրինակ, ցորենը՝ հաճարը, գարին, տրիտիկալեն և այլն, կտավատի տեղական սորտերը և այլն), հատկապես նրանք, որոնք նպաստում են հնագույն ավանդական սորտերի պահպանմանը և դրանց օգտագործմանը որպես մշակութային ժառանգություն և որպես ներդրում ագրո-կենսաբազմազանության պահպանությանը:
8. Վայրի բույսերի տեսակներ, ներառյալ պտուղները (հոն, ալոճ, խնձոր, նուռ, տանձ, մասուր, չիչխան և այլն), հատապտուղներ (ագնվամոր, մոշ և այլն), դեղաբույսեր և արոմատիկ խոտաբույսեր թարմ, համեմունքային, վերամշակված ձևով օգտագործելու համար (մինչև 900 վայրի տեսակներ ավանդականորեն հայտնի են Հայաստանում որպես սնունդ և բուժական նպատակներով օգտագործելու համար):
9. Ընկույզներ (ընկույզ և պնդուկ) (թարմ, կեղևահանած):
10. Մեղվապահության և մեղուների հետ կապված ապրանքներ, ինչպիսիք են մեղրը, ակնամուրը, մայրակաթը, ծաղկափոշին, մեղրամուրը և այլն (հումք և վերամշակված):

#### **Առաջարկությունների ցանկ**

- ✓ *Օրգանական գյուղատնտեսությանը հետագա աջակցությունը առավել կարևոր է օրգանական ոլորտի զարգացման համար: Անհրաժեշտ է ստեղծել պետական աջակցության կամ արտոնությունների տարբեր մեխանիզմներ, որոն շնորհիվ ազարակատերերը անցում կկատարեն ավանդական գյուղատնտեսությունից դեպի օրգանական արտադրության:*
- ✓ *Ճանաչել օրգանական արժեզրթանների բնապահպանական ծառայությունները: Հայաստանի տարածաշրջաններում ֆերմերներին փոխհատուցել այդ ծառայությունների դիմաց: Տեղական, մարզային և ազգային գյուղատնտեսական և բնապահպանական իրավասու մարմիններին ընդգրկել օրգանական արժեզրթաններին աջակցելու նպատակով:*
- ✓ *Մշակել Օրգանական Գյուղատնտեսության Ազգային Պլան (ՕԳԱՊ)՝ ճյուղի զարգացման քաղաքականության համակարգված կիրարկումն ապահովելու համար:*
- ✓ *Անցկացնել մարքետինգային ուսումնասիրություններ հայկական օրգանական ապրանքները արտահանելու ուղղությամբ:*
- ✓ *Ազգային օրգանական օրենդրության վերանայում և համապատասխանեցում հիմնական շուկաների գործող պահանջներին:*
- ✓ *Հիմնել օրգանական ու բազմաֆունկցիոնալ գյուղատնտեսության պիլոտային ծրագրեր տարբեր ընտրված համայնքներում: Ուսուցումների միջոցով աջակցել ու նախապատրաստել համայնքների տարբեր խմբերին բազմաֆունկցիոնալ օրգանական նախագծեր իրականացնելու*

համար: Ձեռք բերված փորձը տարածել այլ համանմաններում փոխանակման ծրագրերի միջոցով:

- ✓ Վայրի հավաքի ոլորտը մեծ ներուժ ունի օրգանական ոլորտի և արժեչոթաների տեսակետից: Արժեչոթաների ձևավորման համար անհրաժեշտ է համայնքների, վայրի տեսակների և նրանց ռեսուրսի գնահատման լրացուցիչ ուսումնասիրություններ իրականացնել: Ուսումնասիրության նպատակը պետք է լինի տեղական մակարդակով արժեչոթաններում պակասող ենթակառուցվածքների ու սարքավորումների և անհրաժեշտ ներդրումների կարիքների որոշումը:
- ✓ Հայկական օրգանական արտադրողներին անհրաժեշտ է աջակցել օրգանական սիմպոզիումներին, ցուցահանդեսներին և առևտրային ցուցադրումներին /տոնավաճառներին մասնակցելու համար:
- ✓ Հայաստանը դանձնել ճանաչելի շուկայի համար որպես օրգանական մթերք արտադրող երկիր: Պարբերաբար Հայաստանում պետք է անցկացնել օրգանական միջոցառումների շարքեր, որոնց նպատակը պետք է լինի աշխարհին երկիրը ներկայացնել իր բնությամբ, ռեսուրսներով և կենսաբազմազանությամբ: Մտերիլիզացնել առկա մասնավոր ու ղոնորական ռեսուրսները:

#### Գրականության ցանկ

1. [www.ecoglobe.am](http://www.ecoglobe.am)
2. ՀՀ Կայուն Գյուղատնտեսական Զարգացման Ռազմավարություն, 2010-2020 թթ.
3. The World Organic Agriculture: statistics and emerging trends 2014, FIBL and IFOAM.
4. [www.organicmonitor.com](http://www.organicmonitor.com)
5. “It is time for Organic 3.0”, M. Arbenz, International Federation of Organic Agriculture Movements (IFOAM), [www.ifoam.org](http://www.ifoam.org)
6. Organic Agriculture. A step towards the Green Economy in the Eastern Europe, Caucasus and central Asia Region. Case studies from Armenia, Moldova and Ukraine, UNEP, 2011.
7. “Organic in Europe. Prospects and developments”, IFOAM EU Group, FiBL and CIHEAM-IAMB, 2014.
8. EC regulations 834/2007, 889/2008, 1235/2008, 508/2013.
9. ՀՀ Օրգանական գյուղատնտեսության մասին օրենք ու ենթաօրենսդրական ակտեր.
10. USDA National Organic Program, CFR 205 Final Rule.
11. Swiss Organic Farming Ordinance.
12. ”Multifunctional Agriculture: A New Paradigm for European Agriculture and Rural Development”, Guido van Huylenbroeck Guido van Huylenbroe, [http://books.google.am/books/about/Multifunctional\\_Agriculture.html?id=RgySOGGms0MC&redir\\_esc=y](http://books.google.am/books/about/Multifunctional_Agriculture.html?id=RgySOGGms0MC&redir_esc=y)
13. “A comparative study of bioactive compounds in primitive wheat populations from Italy, Turkey, Georgia, Bulgaria and Armenia”, [Giambanelli E](#), [Ferioli F](#), [Koçaoglu B](#), [Jorjadze M](#), [Alexieva I](#), [Darbinyan N](#), [D'Antuono LF](#).
14. <http://www.fao.org/docrep/010/a1200e/a1200e00.htm>, “The State of Food and Agriculture 2007. Paying farmers for environmental services.”, FAO, 2007.